ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

« » ..... 2013 թ. N

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կարևորագույն ձեռքբերում է համարում երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի կայացումը, ինչը նկատելի հաջողություններ է արձանագրել ընտանիքի, կանանց, մասնավորապես կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում:

Այս գործընթացում նախարարությունը բարձր է գնահատում մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից ՀՀ Արարատի մարզում երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքները՝ կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների կարիքների վերհանման, երեխաների իրավունքների և սոցիալական պաշտպանության, նրանց հիմնախնդիրների լուծման նպատակով:

Թույլ տվեք իմ շնորհակալությունը հայտնել բաժնի աշխատակիցներին և բաժնի պետ պարոն Գ.Պողոսյանին՝ բարձր պատասխանատվությամբ և հետևողական աշխատանքի համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ **Ֆ.ԲԵՐԻԿՅԱՆ**

Կատարող՝ ընտանիքի, կանանց և երեխաների
հիմնահարցերի վարչություն
Հեռախոս՝ 56 53 21